ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան *«08» ապրիլի 2022թ.*

«Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 443-21020534, տրված 03.12.2003թ., իրավաբանական հասցեն՝ ք.Ստեփանակերտ, Մ.Գոշի 5 (այսուհետ՝ ԱրՊՀ), ի դեմս ռեկտոր Արմեն Սարգսյանի, ով գործում է ԱրՊՀ կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և «ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը» (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 03Ա058227, տրված 23.01.2003թ., իրավաբանական հասցեն՝ Երևան, Գ. Լուսավորչի 15 (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ ԼԻ)՝ի դեմս տնօրեն Վիկտոր Կատվալյանի, ով գործում է ՀՀ ԳԱԱ ԼԻ կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով համագործակցության ապահովման, կողմերի գիտատեխնիկական և կադրային կարողությունների լիարժեք օգտագործման և առաջավոր փորձի փոխանակման անհրաժեշտությունը, ինչպես նաև հաշվի առնելով համագործակցելու փոխադարձ ցանկությունը, կնքեցին սույն համագործակցության պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրի առարկան կողմերի միջև կրթական, գիտահետազոտական և ուսումնամեթոդական ոլորտում համակողմանի համագործակցությունն է՝ համատեղ ծրագրերի մշակման և իրականացման, դասախոսների և հետազոտողների ակադեմիական փոխանակման, համատեղ հայտարարությունների և փաստաթղթերի ստորագրման, տեղեկատվական և մշակութային միջոցառումների իրականացման միջոցով:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Սույն պայմանագրի համաձայն՝ կողմերը պայմանավորվում են համագործակցել հետևյալ ուղղություններով.

2.1.1 ԱրՊՀ-ում և ՀՀ ԳԱԱ ԼԻ-ում իրականացվող փոփոխությունների, իրավական փաստաթղթերի, ակտերի և միջոցառումների մասին տեղեկատվության փոխանակում,

2.1.2 կրթական գործընթացների վերաբերյալ խորհրդատվության իրականացում,

2.1.3 անցկացվող գիտական սեմինարներին, քննարկումներին, մրցույթներին, կոնֆերանսներին, գիտաժողովներին համապատասխան մասնագետների մասնակության ապահովում,

2.1.4 կողմերի կառուցվածքային ստորաբաժանումների միջև համագործակցության խթանում:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 ՀՀ ԳԱԱ ԼԻ-ն պարտավորվում է՝

3.1.1 ԱրՊՀ-ին տրամադրել իր կողմից լրամշակված ծրագրեր, ուսումնական և գիտական գրականություն,

3.1.2 աջակցել ԱրՊՀ-ում բովանդակային և կառուցվածքային բարեփոխումների իրականացմանը,

3.1.3 հնարավորինս աջակցել ԱրՊՀ մասնագետների պատրաստման, պրոֆեսորադասախոսական կազմի համալրման, ատենախոսությունների պաշտպանության կազմակերպան գործընթացներին,

3.1.4 մասնակցել ԱրՊՀ-ում կրթության որակի բարելավմանը, դասախոսական կազմի որակավորման բարձրացմանը,

3.1.5 մասնակցել համատեղ դասախոսական և ուսանողական գիտաժողովների, առարկայական օլիմպիադաների կազմակերպմանը,

3.1.6 իր հնարավորություններով ապահովել բուհական կրթությանն առնչվող միջազգային միջոցառումներին (գիտաժողովներին, սեմինարներին, խորհրդակցություններին) ԱրՊՀ դասախոսների մասնակցությունը,

3.1.7 իրականացնել ուսումնական պլանների և ծրագրերի, ինչպես նաև ուսումնական գործընթացում նորարարական տեխնոլոգիաների կիրառական փորձի փոխանակում,

3.1.8 հնարավորություն ընձեռել ԱրՊՀ դասախոսներին, ասպիրանտներին, մագիստրոսի կրթական ծրագրով սովորողներին ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակումներում գիտական հետազոտությունների արդյունքների տպագրման համար:

3.2 **ԱրՊՀ-ն պարտավորվում է՝**

3.2.1 աջակցել համագործակցության հաջող զարգացմանը՝ ՀՀ ԳԱԱ ԼԻ-ին տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն իր առաջնահերթ ուսումնական կարիքների և խնդիրների վերաբերյալ,

3.2.2 ՀՀ ԳԱԱ ԼԻ-ին պարբերաբար տեղեկացնել անցկացվող գիտահետազոտական աշխատանքների, սեմինարների, համաժողովների մասին և նպաստել ՀՀ ԳԱԱ ԼԻ ներկայացուցիչների մասնակցությանը դրանց,

3.2.3 հնարավորինս աջակցել ՀՀ ԳԱԱ ԼԻ մասնագետների պատրաստման, պրոֆեսորադասախոսական կազմի համալրման, ատենախոսությունների պաշտպանության կազմակերպան գործընթացներին,

3.2.4 մասնակցել համատեղ հիմնարար, կիրառական գիտական հետազոտությունների իրականացմանը, դրանց արդյունքների հրատարակմանը, գիտական և ուսումնամեթոդական հրատարակումների փոխանակմանը,

3.2.5 հնարավորություն ընձեռել ՀՀ ԳԱԱ ԼԻ գիտական աշխատողներին, ասպիրանտներին, մագիստրոսի կրթական ծրագրով սովորողներին ԱրՊՀ հրատարակումներում գիտական հետազոտությունների արդյունքների տպագրման համար,

3.2.6 Արցախի գիտաճանաչողական ուսումնասիրությունների կատարման, հայերենագիտական և հայագիտական հետազոտությունների իրականացման ընթացքում տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն:

4. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

4.1 Սույն պայմանագրով նախատեսված համագործակցությունն իրականացվում է կողմերի միջև հաստատված ամենամյա միջոցառումների ծրագրի համաձայն: Ամենամյա միջոցառումների ծրագիրը հաստատվում է յուրաքանչյուր տարվա սկզբին, իսկ դրա պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Կողմերը նշանակում են մեկական ներկայացուցիչ:

4.2 Տարվա միջոցառումներով ստանձնած պարտավորությունների կատարման համար անհաղթահարելի խոչընդոտների առաջացման դեպքում կողմերը պարտավորվում են այդ մասին նախապես զգուշացնել միմյանց:

4.3 Միջոցառումների ֆինանսավորման աղբյուրները գոյանում են Կողմերի հատկացրած ֆինանսական միջոցներից, մասնակիցների անձնական ներդրումներից, ազգային և միջազգային ծրագրերից, նվիրատվություններից, հիմնադրամներից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

5.2 Պայմանագիրը բաց է լրացումների և փոփոխությունների համար: Կողմերը իրավունք ունեն Պայմանագրի մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Պայմանագրի փոփոխություններն ու լրացումները կազմվում են լրացուցիչ համաձայնագրով և դառնում են սույն Պայմանագրի անբաժանելի մաս:

5.3 Պայմանագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ ենթադրվող հրաժարումից ոչ ուշ, քան երեք ամիս առաջ մյուս կողմին գրավոր ծանուցելով:

5.4 Սույն Պայմանագրով չնախատեսված իրավահարաբերությունների կարգավորման համար Կողմերը առաջնորդվում են ՀՀ և ԱՀ օրենսդրությամբ:

5.5 Սույն Պայմանագիրը կազմված է հայերենով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Հասցե: 0015, ՀՀ, ք.Երևան
Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 15 շենք
Հեռ. 37410 56-53-37

Էլ. հասցե: inslang@sci.am
Տնօրեն՝ Վիկտոր Կատվալյան

Արցախի պետական համալսարան

Հասցե: 375000 ԼՂՀ,
ք.Ստեփանակերտ, Մխիթար Գոշի 5
Հեռ. 37447 94-04-91
Ֆաքս (+374) 47 97-12-14
Էլ. հասցե: rector@asu.am
Ռեկտոր՝ Ա.Յու.Խաչատրյան